ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2017 թվականի N -11-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՏՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2016Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ մասով, „Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին որոշման նախագծի արդյունքներով՝ կողմ- 7, դեմ- չկա, ձեռնապահ չկա, որոշում է.-

1, Քաջարանի քաղաքային համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի „Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 50-Ա որոշման թիվ 2 հավելվածի „Տեխնիկական սպասարկում իրականացնող „բաժնում կատարել փոփոխություն /համաձայն թիվ 2 հավելվածի/:

2, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքի ղեկավարին- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում՝ հավելված 2 „Տեխնիկական սպասարկում իրականացնող,, բաժնում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ ,մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին:

3, Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքի ավագանու 2016թ դեկտեմբերի 13-ի թիվ 50-Ա որոշման թիվ 2 հավելվածը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության  
Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի տեխնիկական սպասարկում  
ընկերության անվանացանկի՝ N—2 հավելվածում համապատասխան փոփոխություն  
կատարելու մասին իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

Աթայան Մերուժան-Վ. Ներսիսյան Կողմ

Անդրեասյան Արմեն-Ա. Արմենյան Կողմ

Առաքելյան Արայիկ-Վ. Արայիկյան Կողմ

Բաղդասյան Արթուր-Վ. Բաղդասյան Կողմ

Գաբրիելյան Գոռ-Գ. Գաբրիելյան Կողմ

Ստեփանյան Դերենիկ-Ս. Դերենիկյան Կողմ

Ստեփանյան Նարեկ-Ն. Նարեկյան Կողմ



Ս. Փարամազյան

2017թ մարտի 6 Քաջարան

Հավելված -2

Հաստատված է

Քաջարանի քաղաքային համայնքի ավագանու  
2017թ. Փետրվարի 27-ի թիվ-11 Ա որոշմամբ

**Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը  
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

1. Աշխատակազմի թվաքանակը՝ 50

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքների անվանումը                                                                          | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/հին | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/նոր |
|-----|-----------------------------------------------------------------------------------------------|-------------------|------------------------------------|------------------------------------|
| 1   | Քաղաքապետ                                                                                     | 1                 | 450,000                            | 450,000                            |
| 2   | Քաղաքապետի տեղակալ                                                                            | 1                 | 300,000                            | 300,000                            |
| 3   | Աշխատակազմի քարտուղար                                                                         | 1                 | 280,000                            | 280,000                            |
| 4   | Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ                                                                | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 5   | Քաղաքաշինության, բնակարանային ֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետ | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 6   | Տեղական տուրքերի և հարկերի հավաքագրման առևտրի և սպասրկումների բաժնի պետ                       | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 7   | Կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի բաժնի պետ                                   | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 8   | Շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, ծրագրերի և կանխատեսումների բաժնի պետ          | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 9   | Աշխատակազմի գլխավոր մասնագետ-աուդիտոր                                                         | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 10  | Աշխատակազմի գլխավոր իրավաբան                                                                  | 1                 | 225,000                            | 225,000                            |
| 11  | Աշխատակազմի գլխավոր մասնագետ հաշվապահ                                                         | 1                 | 225,000                            | 225,000                            |
| 12  | Քաղաքապետի խորհրդական                                                                         | 1                 | -                                  | 256,000                            |
| 13  | Քաղաքապետի խորհրդական                                                                         | 1                 | -                                  | 175,000                            |
| 14  | Տնտեսվար                                                                                      | 1                 | 100,000                            | 100,000                            |
| 15  | Սնտեսվար                                                                                      | 2                 | 125,000                            | 125,000                            |
| 16  | Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգի Կառավարող                                       | 1                 | 140,000                            | 140,000                            |
| 17  | Աշխատակազմի առաջատար մասնագետ                                                                 | 6                 | 140,000                            | 140,000                            |
| 18  | Սպորտ, հրահանգիչ                                                                              | 1                 | 115,000                            | 115,000                            |
| 19  | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ                                                             | 12                | 115,000                            | 115,000                            |
| 20  | Ֆինանսատնտեսագիտական բաժնի երկրորդ կարգի մասնագետ                                             | 1                 | 105,000                            | 105,000                            |
| 21  | Համակարգչի օպերատոր                                                                           | 1                 | 90,000                             | 90,000                             |
| 22  | Գործավար քարտուղարուհի                                                                        | 1                 | 110,000                            | 120,000                            |
| 23  | Գործավար                                                                                      | 1                 | 90,000                             | 100,000                            |
| 24  | Աշխատակազմի գործավար                                                                          | 1                 | 115,000                            | 140,000                            |
| 25  | Աշխատակազմի գործավար                                                                          | 1                 | 80,000                             | 80,000                             |
| 26  | Կաթնալստան բանվոր                                                                             | 1                 | 80,000                             | 80,000                             |
| 27  | Ցրիչ                                                                                          | 1                 | 100,000                            | 80,000                             |
| 28  | Ցրիչ                                                                                          | 1                 | 80,000                             | 80,000                             |
| 29  | Համայնքի ղեկավարի օգնական                                                                     | 1                 | 80,000                             | 80,000                             |
| 30  | Հավաքարար                                                                                     | 2                 | 80,000                             | 80,000                             |
| 31  | Օժանդակ բանվոր                                                                                | 2                 | 80,000                             | 80,000                             |
| 32  | Օժանդակ բանվոր                                                                                | 1                 | 256,000                            | 256,000                            |
| 33  | ԸՎԱԳ բաժնի պետ                                                                                | 1                 | 5,017,000                          | 5,493,000                          |
| 34  | ընդամենը                                                                                      | 50                |                                    |                                    |



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Զազարան համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Զազարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2017 թվականի N -12-Ա

<<ԶԱԶԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՓԲԸ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „ Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով,  
համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-7, դեմ-չկա,  
ձեռնպահ-չկա, ՈՐՈՇՈՒՄ է,-

<<Զազարանի համայնքի կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ-ի կանոնադրության մեջ կատարել  
փոփոխություն /: կից կցվում է կանոնադրությունը/

Աթալյան Մերուժան-Մ. Պր. Կողմ

Գաբրիելյան Գոռ-Պ. Կողմ

Անդրեասյան Արմեն-Ա. Պ. Կողմ

Ստեփանյան Դերենիկ-Ս. Պ. Կողմ

Առաքելյան Արայիկ-Ա. Պ. Կողմ

Ստեփանյան Նարեկ-Ն. Պ. Կողմ

Բաղդյան Արթուր-Ա. Պ. Կողմ



Մ Փարամազյան

2017թ մարտի 6 Զազարան

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Զաջարան համայնքի

ավագանու

2017թ. փետրվարի 27-ի թիվ 12-Ա որոշման

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԲԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- 1.1. Սյունիքի մարզի Զաջարան համայնքի «Զաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը ամբողջությամբ պատկանում է Զաջարանի համայնքապետարանին:
- 1.2. Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Զաջարանի քաղաքապետի 1998թ. Հունվարի 20-ի թիվ 4 որոշմամբ /ՀՀԿառավարության 08.07.1997թ. թիվ 245 որոշմամբ «Զաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» պետական ձեռնարկության կազմից առանձնացված և Զաջարան համայնքին սեփականության իրավունքով հանձնված հիմնական միջոցների ներդրմամբ:
- 1.3. Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:
- 1.4. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.5. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 1.6. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետիրոջ պարտավորությունների համար:
- 1.7. Ընկերության բաժնետերը պատասխանատվություն չի կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:
- 1.8. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:
- 1.9. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար, իսկ ընկերությունը պատասխանատվությունը չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:
- 1.10. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանում՝ հայերեն «Զաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերություն, իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն և ռուսերեն), բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ֆիրմային ռեկվիզիտներ:
- 1.11. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետև՝ Օրենսգրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետություն օրենքներով, այլ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.12. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետիրոջ կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն Ընկերության պարտավորությունների համար: Միաժամանակ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով կարող է որոշում կայացնել ընկերության վերակազմակերպման կամ լուծարման մասին:

1.13. Ընկերության ֆիրմային անվանումն է հայերեն լրիվ «ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, կրճատ «ՔԱԶԱՐԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ,

1.14. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանակն /փոստային/ հասցեն՝ 377815, ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 4

1.15. Ընկերությունը ստեղծվում է առանց ժամկետի սահմանափակման:

1.16. Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է:

1.17. Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետիրոջ և բոլոր մարմինների համար:

1.18. Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է հիմնադրի առաջարկով՝ համայնքի ավագանու հաստատմամբ:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒՆԴԱՏԱԿԸ

2.1. Ընկերության ստեղծման և իր առջև դրված նպատակներն են .

- համայնքին անհրաժեշտ պետական չափորոշիչներին համապատասխան որակի և քանակի խմելու ջրի մատակարարում
- կոյուղու կեղտաջրերի ընդունման և հեռացման ապահովում
- բարեկարգման օբյեկտների, կանաչապատ և ընդհանուր օգտագործման այլ օբյեկտների բարեկարգում և պահպանում
- ջրմուղ-կոյուղու համակարգերի շահագործման և զարգացման պետական քաղաքականության իրականացում
- փողոցների, հրապարակների, այլ տարածքների սանիտարական մաքրումը.
- փողոցների լուսավորման համակարգերի պահպանումը, նորոգումը ու սպասարկումը.
- հուշարձանների, պատմամշակութային արժեքների տարածքների պահպանումը և բարեկարգումը.
- ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման և այլ կառուցվածքների շահագործումը և վերանորոգումը
- համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների և ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.

- գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները.
- Հիմնադրի որոշմամբ համայնքային տնտեսության պահպանման այլ ծառայություններ:
- շահույթի ստացում

2.2. Իր առջև դրված նպատակներին հասնելու համար Ընկերությունը հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումները, զբաղվում է տնտեսական գործունեության տարբեր տեսակներով, այդ թվում՝

ա/համայնքի ջրամատակարարման աշխատանքների կազմակերպում և իրականացում

բ/կոյուղու կեղտաջրերի հեռացման աշխատանքների կազմակերպում և իրականացում

գ/բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կազմակերպում և իրականացում

2.3. Իր առջև դրված նպատակների իրականացման ու խնդիրների արդյունավետ իրականացման համար Ընկերությունը

- մշակում և իրականացնում է քաղաքի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի զարգացման ծրագրեր
- կազմակերպում է իր ենթակայության տակ գտնվող ջրամատակարարման ու կոյուղու համակարգերի կառուցվածքների, սարքավորումների, սարքերի և բարեկարգման օբյեկտների շահագործման ու պահպանման աշխատանքներ
- ներդնում է ջրամատակարարման և կոյուղու կեղտաջրերի հեռացման բնագավառներում շահագործման մակարդակի և տեխնոլոգիայի արդյունավետությունը բարձրացնող գիտության և արտադրության նվաճումներ
- ապահովում է ջրի խնայողաբար օգտագործումն և շրջակա միջավայրի մաքրության պահպանումը,
- ապահովում է ջրմուղ-կոյուղու համակարգերից օգտվող բոլոր սպառողներից ջրի և կեղտաջրերի հեռացման ծառայության վարձերի՝ սահմանված սակագներով գանձումը

2.4. Հիմնադրի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած արտադրատնտեսական, գործարարական և այլ գործունեություն:

Սույն կանոնադրությամբ և կանոնակարգով սահմանված խնդիրներն իրագործելիս համագործակցում է բանկերի և այլ վճարահաշվարկային հաստատությունների հետ, հաճախորդների պատշաճ մակարդակով սպասարկելու նպատակով կնքում է պայմանագրեր:

2.5. Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է կանխիկ և անկանխիկ գործառնություններ:

### 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ ՀՀ բանկերում նաև արտարժույթով:

3.2. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության խորհրդի կողմից: Ընկերության գործունեության առանձնացված ստորաբաժանումներն են՝ Կեղտաջրերի վնասագերծման կայան և Խմելու ջրի մաքրման կայան:

3.3. Մասնաճյուղի և ներկայացուցչության ղեկավարները նշանակվում են Ընկերության տնօրենի կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:

3.4. Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

3.5. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ հայերեն, ռուսերեն գրառումներով, կլոր կնիք:

3.6. Ընկերությունը իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ ձեռք բերել դրանք:

3.7. Ընկերությունը իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել:

3.8. Համայնքի բյուջեով ուղղակի նախատեսված միջոցների սահմաններում մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է գնումների կատարման բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

Ընկերության կողմից համայնքային այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ գնվել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

#### 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1. Կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից, ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1436700/մեկ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր/ 33 դրամ, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 743 350/յոթ հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր հիսուն/ 33 դրամ Բոլոր /երկու/ սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են , սեփականության իրավունքով պատկանում են 33 Սյունիքի մարզի Քաջարան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից: Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են:

4.2. Ընկերությունը ստեղծվել է մեկ անձի կողմից կամ կազմված է մեկ անձից՝ մեկ բաժնետիրոջ կողմից Ընկերության բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում, ինչի մասին տեղեկությունները պետք է պարունակվեն սույն կանոնադրությունում, գրանցվեն և հրապարակվեն: Մեկ անձի կողմից Ընկերության հիմնադրման դեպքում հիմնադրման մասին որոշումը (գրավոր) կայացնում է այդ անձը՝ միանձնյա: Կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

#### 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ:

5.1. Ընկերության կառավարումն իրականացնում են 3իմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով իր կողմից նշանակված գործադիր մարմնի՝ Ընկերության տնօրենի միջոցով (այսուհետ՝ Տնօրեն):

5.2. Ընկերության 3իմնադիրն ունի Ընկերության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ համայնքի ավագանու հաստատմամբ:

5.3. Ընկերության 3իմնադրի լիազորություններն են՝

ա) Ընկերության հիմնադրումը, վերակազմակերպումը և լուծարումը.

բ) Ընկերության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) Ընկերության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) Ընկերության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) Ընկերության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Ընկերության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

5.4. Համայնքի ղեկավարն իրականացում է ընկերության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

## **6. Համայնքի ղեկավարը՝**

ա) նշանակում և ազատում է ընկերության Տնօրենին համայնքի ավագանու որոշմամբ, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է ընկերության Տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում ընկերության գործունեության նկատմամբ. գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ընկերության Տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է ընկերության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում ընկերությանն ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ ընկերության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) ավագանու որոշմամբ հաստատում է ընկերության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

## **7. Տնօրենը՝**

ա) իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը.

բ) Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է ընկերության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

## **8. Տնօրենը՝**

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս ընկերության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է ընկերության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) տալիս է ընկերության անունից հանդես գալու լիազորագրեր.

ե) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է ընկերության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև.

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) իրականացնում է կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժ) վերահսկողություն է իրականացնում ընկերության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժբ) կազմում է ընկերության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հաստատման.

ժգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

9. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

10. Ընկերության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրերով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

11. **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

12. Ընկերության սեփականությունը ձևավորվում է ընկերության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Ընկերության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

13. Ընկերությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի և կոլեգիալ խորհուրդի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

14. Հիմնադիրը սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Ընկերության լուծարումից հետո մնացած գույքի:

15. Ընկերության սեփականության պահպանման հոգսը կրում է Ընկերությունը: Ընկերության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

16. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից ընկերության ամրացված գույքը:

17. Ընկերությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Ընկերությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

18. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ընկերության ստացած եկամուտները ընկերության սեփականությունն են: Ընկերությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

19. Ընկերության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

20. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

21. Ընկերությունը ֆինանսավորում է Հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

22. Ընկերության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները:

բ) Բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները:

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և Ընկերության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

23. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

25. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

26. Ընկերության տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրին, կոլեգիալ մարմնին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

26.1. Համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության կոլեգիալ մարմնի եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ, պետք է ստուգվեն և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության հիմնադրի հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:

26.2 Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման կոլեգիալ մարմնի կողմից:

## 27. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՐԸ

28. Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընկերության տնօրենի կողմից: Ընկերության գլխավոր հաշվապահը իրականացնում է Ընկերության հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ՀՀ Կենտրոնական բանկի ու ՀՀ Կառավարության լիազորված մարմնի նորմատիվային իրավական ակտերի համաձայն:

29. Ընկերության գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատակիցների համար:

30. Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

31. Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև ընկերության հիմնադրին, և կոլեգիալ մարմնին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական հաշվետվությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան

## 32. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Կազմակերպությունը վերակամակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տեղական ինքնակառավարման մարմինների մասին ՀՀ օրենքի համաձայն:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Բաջարան համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Բաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru


### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2017 թվականի N -13-Ա


«ԲԱԶԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով,  
համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-7, դեմ-չկա,  
ձեռնպահ-չկա, ՈՐՈՇՈՒՄ Է


<<Բաջարանի համայնքի կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր  
պաշտոնակատար Արման Էդիկի Հարությունյանին նշանակել ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնում:


Աթայան Մերուժան-  Կողմ


Գաբրիելյան Գոռ-  Կողմ

Անդրեասյան Արմեն  Կողմ


Ստեփանյան Դերենիկ  Կողմ

Առաքելյան Արայիկ-  Կողմ

Ստեփանյան Նարեկ  Կողմ

Բադալյան Արթուր-  Կողմ



 Մ Փարամազյան

2017թ մարտի 6 Բաջարան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2017 թվականի N -14-Ա


ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈԿՅԱՆ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԱԿՈՂ  
ԱՐԿԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ  
կետով, համայնքի ավագանին որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-7, դեմ-  
չկա, ձեռնպահ-չկա, ՈՐՈՇՈՒՄ Է

1 Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Քաջարան համայնքի սեփականություն  
հանդիսացող Աբովյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող 446 ք.մ տարածքը անհատույց օգտագործման  
իրավունքով անորոշ ժամկետով 2017թ մարտի 1-ից տրամադրել <<Քաջարանի մանկապատանեկան  
մարզադպրոց,,ՊՈԱԿ-ին , ընթշամարտի մարզասրահ օգտագործելու նպատակով :

Աթայան Մերուժան-  Կողմ

Գաբրիելյան Գոռ-  Կողմ

Անդրեասյան Արմեն  Կողմ


Ստեփանյան Դերենիկ  Կողմ

Առաքելյան Արայիկ-  Կողմ

Ստեփանյան Նարեկ  Կողմ

Բաղդալյան Արթուր-  Կողմ



 Մ Փարամազյան

2017թ մարտի 6 Քաջարան